

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի 2016թ. հոկտեմբերի 27-ի նիստի

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 28-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուջյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. **ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի հաղորդումը դատախազության համակարգի զարգացման ծրագրի և դրանից բխող միջոցառումների մասին:**

2. **Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:**

3. **ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագրի մասին հարց:**

4. **Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:**

5. **Ընթացիկ հարցեր:**

1. **ԼՍԵՑԻՆ. ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանի հաղորդումը դատախազության համակարգի զարգացման ծրագրի և դրանից բխող միջոցառումների մասին:**

ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանն ընդհանուր գծերով ներկայացրեց դատախազության առջև ծառայած հիմնական խնդիրները՝ ընդգծելով դրանց լուծման ուղղությամբ ծրագրերի մշակման և դրանց շրջանակներում համապատասխան միջոցառումների ձեռնարկման անհրաժեշտությունը: Իբրև առաջնահերթ խնդիր գլխավոր դատախազն առանձնացրեց դատախազական հսկողության և վերահսկողության մեթոդների լատարելագործումը, դրանց ինստիտուցիոնալ կազմակերպման չափանիշների հստակեցումը: Մասնավորապես, գլխավոր դատախազը նշեց, որ հստակեցման կարիք ունի այն հարցը, թե արդյոք դատախազական հսկողության և վերահսկողության շրջանակներում մասնագիտացումը պետք է կազմակերպել ըստ հանցագործության փուլերի, թե ըստ հանցագործության տեսակների: Գլխավոր դատախազը հավելեց, որ նշված խնդրի հստակ լուծում գտնելու պարագայում պատրաստ է իրականացնել անհրաժեշտ կառուցվածքային փոփոխություններ: Դատախազության առաջնահերթ խնդիրների շարքում ՀՀ գլխավոր դատախազը կարևորեց իրավապահ մարմինների գործունեության համակարգման ուղղված լիազորությունների վերապահումը դատախազությանը, դատախազության կոլեգիայի, գիտամեթոդական խորհրդի գործունեության ակտիվացումը: Անդրադառնալով իրավագիտության ֆակուլտետի հետ համագործակցությանը՝ գլխավոր դատախազը նշեց, որ

դրա կարևորությունն անգնահատելի է, քանի որ ֆակուլտետի գիտական ներուժը կարող է մեծապես նպաստել դատախազության առջև դրված խնդիրների լուծմանը: Երկուստեք համագործակցությունը, Ա.Դավթյանի, խոսքերով, կարող է նպաստել տեսության և պրակտիկայի միջև կապի ամրապնդմանը: Իբրև համագործակցության հիմնական ձևեր՝ գլխավոր դատախազն առաջարկեց դատախազության գիտամեթոդական խորհրդի կազմում ներգրավել պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների, ֆակուլտետում պատրաստվող թեկնածուական ատենախոսությունները, նաև մագիստրոսական թեզերն ուղարկել դատախազություն, գիտական թեմաների հաստատման ժամանակ դատախազության կողմից առաջարկներ ներկայացնելը, ուսանողական պրակտիկայի կազմակերպումը դատախազությունում, դատախազության ներկայացուցիչների կողմից դասախոսությունների կամ գործնական պարապմունքների ձևով ուսանողների հետ հանդիպումների կազմակերպումը: Գլխավոր դատախազն անդրադարձավ այն խնդրին, որ լավագույն ուսանողները չեն շտապում աշխատանքի անցնել դատախազության համակարգում: Ա.Դավթյանն այս առնչությամբ հայտնեց, որ պատրաստ է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել դատախազության համակարգում աշխատանքն ուսանողների համար գրավիչ դարձնելու համար: Վերջում գլխավոր դատախազը շնորհակալություն հայտնեց ներկաներին և հավաստիացրեց, որ որպես շահագրգիռ կողմ՝ պատրաստ է անհրաժեշտ քայլեր ձեռնարկել ֆակուլտետի հետ կապեր հաստատելու և դրանք ամրապնդելու ուղղությամբ:

Խորհրդի նախագահ, պրոֆ. Գ.Ղազինյանը նշեց, որ ֆակուլտետը պատրաստ է համագործակցել դատախազության հետ՝ ողջունելով համագործակցության առաջարկվող ձևերը: Խորհրդի նախագահն առաջարկեց մշակել համագործակցության ծրագիր այն ավելի առարկայական դարձնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը, պրոֆ. Հ.Խաչիկյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունելի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ, քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ ի.գ.թ., դոցենտ Ս.Մեղրյան):

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ պրոֆ. Ա.Վաղարշյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում իր ղեկավարած ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Տ.Բարսեղյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

Խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

3. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագրի մասին հարց:

Դեկան պրոֆ. Գ.Ղազինյանն ընդհանուր գծերով ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագիրը, որը նախապես բաժանվել էր խորհրդի բոլոր անդամներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի և Արցախի պետական համալսարանի պատմաիրավաբանական ֆակուլտետի միջև համագործակցության ծրագիրը (ծրագիրը կցվում է):

4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի հեռակա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

4.1 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հեռակա ասպիրանտ Տաթևիկ Նահապետյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տաթևիկ Նահապետյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 32 կրեդիտ, ներառյալ՝ 3 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 25 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.2 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Սուրեն Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սուրեն Վարդանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 55 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ՝ պրակտիկայից, 33 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.3 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա հեռակա ասպիրանտ Նանե Ղազարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նանե Ղազարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 36 կրեդիտ, ներառյալ՝ 4 կրեդիտ պրակտիկայից, 32 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.4 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ասպիրանտ Հասմիկ Սարգսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Դանիելյանը, պրոֆ. Ն.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նանե Ղազարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 57 կրեդիտ, ներառյալ՝ 3 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ պրակտիկայից, 46 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.5 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Արտաշես Խալաթյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ասպիրանտի գիտական ղեկավարը՝ ի.գ.թ., դոցենտ Վ.Այվազյանը տեղեկացրեց, որ Ա.Խալաթյանի՝ ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետը լրացել է, սակայն ասպիրանտն աշխատանքն ավարտին է հասցրել և պատրաստվում է ներկայացնել Սահմանադրական իրավունքի ամբիոն՝ նախնական քննարկում անցկացնելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.6 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը երրորդ տարվա հայցորդ Լաուրա Պետրոսյանցի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լաուրա Պետրոսյանցը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 130 կրեդիտ, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.7 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անահիտ Անտոնյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անահիտ Անտոնյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 130 կրեդիտ, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.8 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անի Միքայելյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Միքայելյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 136 կրեդիտ, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.9 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի առաջին տարվա հեռակա ասպիրանտ Վահե Աբելյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի այն հանգամանքը, որ Վահե Աբելյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 16 ընդհանուր, տպագրության է նախապատրաստում մեկ գիտական հոդված, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.10 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի երրորդ տարվա հեռակա ասպիրանտ Նարե Սահակյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Հովհաննիսյանը, դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի այն հանգամանքը, որ Նարե Սահակյանը հաշվետու ժամանակաշրջանում թեկնածուական ատենախոսության ուղղությամբ որևէ աշխատանք չի կատարել և գիտական ղեկավարին ոչինչ չի ներկայացրել, չատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.11 ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Կարեն Ամիրջյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Վաղարշյանը, ասիստենտ Տ.Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկ Հարությունյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 150 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության

կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 110 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.12 ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Վաղարշյանը, ասիստենտ Տ.Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Վարդանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 55 կրեդիտ, ներառյալ՝ 15 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ՝ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.13 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Արամ Ղահրամանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արամ Ղահրամանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 52 կրեդիտ, ներառյալ՝ 16 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 17 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.14 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Հայկուհի Սեդրակյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկուհի Սեդրակյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 82 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 22 կրեդիտ հետազոտողի մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.15 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Միքայել Խչեյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միքայել Խչեյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 145 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 15 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 100 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.16 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Նաիրա Մանուչարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նաիրա Մանուչարյանը տպագրել է 4 գիտական հոդված, հանձնել է որակավորման քննությունները, թեկնածուական ատենախոսությունն ավարտել է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.17 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ասպիրանտ Աննա Ավետիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աննա Ավետիսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել անհրաժեշտ կրեդիտները, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.18 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Մուրաֆյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Մուրաֆյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 138 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 12 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 96 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.19 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Ռուբինա Պետրոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուբինա Պետրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 62 կրեդիտ, ներառյալ՝ 19 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 3 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 36 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.20 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Նարինե Ավագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռուբինա Պետրոսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 108 կրեդիտ, ներառյալ՝ 16 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 12 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 70 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.21 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Շուշանիկ Ղուկասանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Շուշանիկ Ղուկասյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 114 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 16 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ պրակտիկայից, 70 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.22 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարիամ Այվագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարիամ Այվագյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 51 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 3 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 25 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.23 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Մարիամ Հովսեփյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանը, դոց. Դ.Մերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարիամ Հովսեփյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 49 կրեդիտ, ներառյալ՝ 16 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 7 կրեդիտ պրակտիկայից, 17 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.24 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Արմենուհի Չիֆլիկյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանը, դոց. Դ.Մերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմենուհի Չիֆլիկյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 95 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, 63 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.25 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Ռոզա Աբրահամյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ռոզա Աբրահամյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 95 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ պրակտիկայից, 62 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.26 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Գոռ Միրզոյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գոռ Միրզոյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 114 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 12 կրեդիտ մասնագիտական

պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 72 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.27 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Նունե Հայրապետյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբրուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նունե Հայրապետյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 50 կրեդիտ, ներառյալ՝ 18 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, 26 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.28 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Նինա Փիրումյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբրուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նինա Փիրումյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 148 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 16 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 102 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.29 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Լիանա Եղիզարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբրուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լիանա Եղիզարյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 50 կրեդիտ, ներառյալ՝ 18 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, 26 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.30 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Սրբուհի Գալյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբրուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սրբուհի Գայանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 99 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ պրակտիկայից, 60 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.31 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Գոհար Սիմոնյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գոհար Սիմոնյանը հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, աշխատանքն ավարտման փուլում է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.32 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Ժենյա Ստեփանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ժենյա Ստեփանյանը հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները, աշխատանքն ավարտման փուլում է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.33 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Գոհար Հակոբյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ասպիրանտի գիտական ղեկավարը՝ ի.գ.թ., դոց. Ա.Մարգարյանը տեղեկացրեց, որ Գ.Հակոբյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.34 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Էդգար Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ իրավ. գիտ. դոկտեր, պրոֆ. Ա.Գաբուզյանը տեղեկացրեց, որ Է.Անդրեասյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.35 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Կարեն Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Հովհաննիսյանը երկրորդ տարվա հայցորդ է, հանձնել է որակավորման բոլոր քննությունները, բացի մասնագիտական քննություններից, աշխատանքի 80%-ը պատրաստ է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.36 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Քրիստինա Խաչատրյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Քրիստինա Խաչատրյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 55 կրեդիտ, ներառյալ՝ 8 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 8 կրեդիտ պրակտիկայից, 30 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.37 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Մարինե Իսահակյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Գաբուզյանը, դոց. Ա.Մարգարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարինե Իսահակյանը հինգերորդ տարվա հայցորդ է, հանձնել է որակավորման բոլոր քննությունները, աշխատանքի 90%-ը պատրաստ է, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.38 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Տաթևիկ Սուջյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ասպիրանտի գիտական ղեկավարը՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆ. Գ.Ղազինյանը տեղեկացրեց, որ Տաթևիկ Սուջյանի՝ ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվել է, և ասպիրանտը սույն թվականի նոյեմբերի 12-ին ԲՈՀ-ի՝ Իրավագիտության 001 մասնագիտական խորհրդում պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը, և խորհրդի կարծիքը եղել է դրական:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.39 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Դանիելյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Դանիելյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 110 կրեդիտ, ներառյալ՝ 20 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ պրակտիկայից, 72 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.40 **ԼՍԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրմինալիստիկայի ամբիոնի հայցորդ Էմմա Ավագյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազիսյանը, պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էմմա Ավագյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 50 կրեդիտ, ներառյալ՝ 18 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ պրակտիկայից, 26 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.41 **ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անժելա Հովհաննիսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անժելա Հովհաննիսյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 54 կրեդիտ, ներառյալ՝ 4 կրեդիտ պրակտիկայից, 50 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

4.42 **ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անի Խլղաթյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ իրավ. գիտ. դոկտոր. պրոֆ. Վ.Ստեփանյանը տեղեկացրեց, որ Ա.Խլղաթյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.43 **ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անի Աթանեսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ իրավ. գիտ. դոկտոր. պրոֆ. Վ.Ստեփանյանը տեղեկացրեց, որ Ա.Աթանեսյանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.44 **ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ասպիրանտ Անի Աղագույանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ իրավ. գիտ. դոկտոր. պրոֆ. Վ.Ստեփանյանը տեղեկացրեց, որ Ա.Աղագույանն ավարտել է ասպիրանտուրան ասպիրանտուրայում ուսումնառության ժամկետն ավարտվելու հիմքով՝ առանց թեկնածուական ատենախոսությունը պաշտպանելու:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հայտարարությունն ընդունել ի գիտություն:

4.45 **ԼՍԵՑԻՆ.** Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անի Բաղայանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անի Բաղայանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 44 կրեդիտ, ներառյալ՝ 4 կրեդիտ պրակտիկայից, 40 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5. Ընթացիկ հարցեր

5.1 **ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ Նարինե Մանասյանին ամբիոնում հայցորդ ձևակերպելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Ս.Մեղրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Բավարարել Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ Նարինե Մանասյանին ամբիոնում հայցորդ ձևակերպելու մասին՝ հաշվի առնելով, որ Ն.Մանասյանը ավարտել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի շրջանավարտ է, ներկայումս աշխատում է ՀՀ վարչական վերաքննիչ դատարանում որպես նախագահի խորհրդական, տպագրել է երկու գիտական հոդված.

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

5.2 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և Միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ԱրՊՀ իրավունքի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Մարիամ Գրիգորյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել ԱրՊՀ իրավունքի ամբիոնի 1-ին տարվա ասպիրանտ Մարիամ Գրիգորյանի՝ «Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմնախնդիրը ազգերի և ժողովուրդների ինքնորոշման իրավունքի իրացման համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 - «Միջազգային իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին:

5.3 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արամ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության թեման փոխելու մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:
ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոխել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արամ Ղահրամանյանի թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն՝ «Լիզինգի քաղաքացիաիրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03- «Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)»:

Բ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

ԾՐԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ

2016-2017 ուսումնական տարվանից սկսած՝ ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետը նախատեսում է աջակցել ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի զարգացմանը: Այդ նպատակով նախատեսվում է հետևյալ միջոցառումների իրականացումը՝

1. Աջակցության ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական, առարկայական ծրագրերի վերանայման և մշակման հարցում:
2. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, ուսումնամեթոդական նյութերի տրամադրում ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետին:
3. ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների ղեկավարում, թեմաների հաստատում, նախնական պաշտպանության կազմակերպում:
4. ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի լավագույն ուսանողներին հնարավորություն ընձեռել ուսումը շարունակել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում՝ հնարավորության դեպքում վերջիններիս համար սահմանելով անվանական կրթաթոշակ:
5. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի պարբերականներում ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի դասախոսների, ասպիրանտների գիտական հոդվածների հրատարակում:
6. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դասախոսների կողմից տարեկան 1-2 անգամ ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետում դասախոսությունների, քննարկումների անցկացում (Վարչական իրավունք, Աշխատանքային իրավունք, Կրիմինալիստիկա, Միջազգային իրավունք, Վարչական դատավարություն,

Միջազգային մասնավոր իրավունք, Քրեական դատավարություն, Ապացույցների տեսությունը քրեական դատավարությունում, Վիկտիմալոգիա, Իրավաբանաի մասնագիտական հմտություններ, Իրավունքի սոցիոլոգիա, Գործարարական իրավունք, Այլընտրանքային պատժատեսակների հիմնախնդիրները, Կորպորատիվ իրավունք, Արտասահմանյան երկրների վարչական իրավունք, Իրավունքի փիլիսոփայություն):

7. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետում ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի դասախոսական կազմի վերապատրաստման կազմակերպում՝ թե ուսուցման մեթոդիկայի, թե բովանդակային կտրվածքով: Հնարավորության դեպքում՝ դրանք կարող են անցկացվել հեռահար կարգով:
8. ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի ուսանողների համար հեռահար կարգով (online) դասախոսությունների անցկացում կամ դասախոսություններին հեռահար ունկնդման ապահովում:
9. ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի և ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի ուսանողների ներգրավում միջբուհական ուսումնական դատախաղերին:
10. ԵՊՀ Իրավագիտության և ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետների դասախոսական և ասպիրանտական համատեղ գիտական կոնֆերանսների կազմակերպում ԱրՊՀ-ում և ԵՊՀ-ում, ընդ որում՝ Արցախի ներկայացուցիչների ելույթները կարող են կազմակերպվել վիրտուալ կարգով:
11. Առաջարկվում է նախատեսել պարբերական բնույթ կրող, տարեկան գիտաժողով՝ նվիրված արցախցի մեծանուն իրավագետ Վ. Ներսիսյանցի հիշատակին:
12. Խթանել ԵՊՀ Իրավագիտության և ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետների ուսանողական խորհուրդների համագործակցությունը՝ համատեղ միջոցառումներ կազմակերպելու ուղղությամբ:
13. Օժանդակել ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետում իրավաբանական կլինիկայի ձևավորմանը:
14. Հնարավորություն ընձեռել ԱրՊՀ Պատմաիրավաբանական ֆակուլտետի ուսանողներին պրակտիկա անցնել ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի Իրավաբանական կլինիկայում:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2015-2016 թթ. հաշվետու ժամանակաշրջանում գիտաուսումնական գործունեության վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Գիտական գործունեություն

- Հրատարակված գիտական աշխատանքները.*
 - մենագրություններ՝ **4** (որոնցից մեկը տպագրության փուլում),
 - գիտական հոդվածներ՝ **18**,
 - ուսումնաօժանդակ ձեռնարկ՝ **1**:
- Մասնակցություն գիտական կոնֆերանսներին, կլոր-սեղաններին և այլն՝ 6.*
 - Չեկոյցներ ՀՀ սահմադրության 20-ամյակին նվիրված՝ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովում՝ 4,
 - Չեկոյցներ 2015 թ. օգոստոսին Նիդերլանդների Մասստրիխտի համալսարանում Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխությունների մշակման շրջանակներում կազմակերպված մասնագիտական քննարկումներին՝ 2:
- Պրոֆեսորադասախոսական կազմի արդասահմանյան հրատարակություններ և զեկոյցներ՝ 3.*
 - Դալլարյան Վ., Развитие гражданского процесса в Республике Армения с 1990 г. // Сборник научных статей «Евразийский гражданский процесс: к 25-летию стран СНГ и Балтии», М.: «СТАТУТ», 2015, էջ 11-33
 - Իսկրյան Ա., Доступ к экологической информации как основа обеспечения эффективного участия общественности в принятии экологически значимых решений // Материалы международной научно-практической конференции «Евразийская интеграция: правовой и образовательный аспекты», Новосибирск, 2015, էջ 187-188,
 - Հախվերդյան Հ., // Материалы международной научно-практической конференции «Евразийская интеграция: правовой и образовательный аспекты», Новосибирск, 2015, էջ 127-128:
- Գիտական թեմաների կատարում՝ 1.*
 - Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հայտարարած գիտական հետազոտությունների թեմատիկ մրցույթի շրջանակներում շահել է դրամաշնորհ «Էկոլոգիական տեղեկատվության իրավական ասպեկտները, օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները և հե-

ռանկարները ՀՀ-ում» վերտառությամբ գիտական հետազոտություն իրականացնելու համար:

5. Արենախոսություններ՝ 2.

- պաշտպանված թեկնածուական ատենախոսություններ՝ 1 (Հ.Հովհաննիսյան, «Արբիտրաժային վճիռների վիճարկման վարույթի հիմնախնդիրները ՀՀ-ում»),
- պաշտպանության երաշխավորված աշխատանքներ՝ 1 (Հ.Հախվերդյան, «ՀՀ-ում էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի ներդրման իրավական ասպեկտները»):

Ուսումնական գործունեություն

1. Գիտամանկավարժական կադրերի պատրաստում և վերապատրաստում.

- ամբիոնն ունի 2 առկա, 5 հեռակա ուսուցմամբ ասպիրանտ, 2 հայցորդ,
- ամբիոնի բոլոր հիմնական դասախոսները՝ Ս. Մեղրյանը, Վ. Հովհաննիսյանը, Գ. Պետրոսյանը, ավարտել են 2011-2016 թթ. ԵՊՀ դասախոսների վերապատրաստման ծրագիրը,
- ամբիոնի անդամ Տ. Վարդազարյանը 2015-2016 ուս. տարում վերապատրաստվել է Անգլիայի Նոթինհեմի իրավաբանական դպրոցում՝ ստանալով Կորպորատիվ և սնանկության իրավունքի մագիստրոսի աստիճան,
- ամբիոնի վարիչ Ս.Մեղրյանը 2015 թ. նոյեմբերի 2-6-ը TEMPYS ARMENQA ծրագրի շրջանակներում ԵՊՀ պատվիրակության կազմում Գերմանիայի Օսնաբրուկի համալսարանում մասնակցել է մասնագիտական որակավորման ոլորտային շրջանակների մշակմանն ու ներդրմանը նվիրված կլոր-սեղանին,
- ամբիոնի վարիչ Ս. Մեղրյանը 2015 թ. 30.11-04.12-ին ֆակուլտետի պատվիրակության կազմում մասնակցել է Գերմանիայի Համբուրգի, Հայդելբերգի և Մանհայմի համալսարաններում GIZ-ի կազմակերպած քննարկումներին՝ նվիրված իրավաբանական կրթության զարգացման ուղիներին և հեռանկարներին,
- ամբիոնի բոլոր դասախոսներն ու ասպիրանտները մասնակցել են 2016 թ. սեպտեմբերի 19-20-ին Երևանի Մարիոթ հյուրանոցում GIZ-ի կազմակերպած սեմինարին՝ նվիրված իրավաբանական կրթության և դասավանդման մեթոդներին,
- ամբիոնի վարիչ Ս. Մեղրյանը ֆակուլտետի պատվիրակության կազմում մասնակցել է 2016 թ. սեպտեմբերի 21-23-ը Թբիլիսիում GIZ-ի կազմակերպած տարածաշրջանային կլոր-սեղանին՝ նվիրված իրավաբանական կրթության և դասավանդման մեթոդներին.
- էկոլոգիական իրավունքի կենտրոնի աշխատանքներում ներգրավված բոլոր դասախոսները և ասպիրանտները 11.04.2016 թ. մասնակցել են «Շրջակա միջավայրի հարցերով կորպորատիվ պատասխանատվությունն անդրսահմանային համատեքստում» և «Շրջակա միջավայրին վերաբերող հարցերով արդարադատության մատչելիությունը միջազգային իրավունքում» թեմաներով

Կենտրոնում կազմակերպված դասախոսություններին, որոնք վարել է Ստոկհոլմի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկան, Օրիուս կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի նախագահ պրոֆեսոր Յոնաս Էբեստնը:

2. *Քաղաքացիական ծրագրերի վերանայում.*

- Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հետ համատեղ ներկայացվել են «Քաղաքացիական իրավունք և դատավարություն» և «Գործարարական իրավունք» մագիստրոսական ծրագրերի պահպանման հիմնավորումները: Ներկայումս աշխատանքներ են տարվում դրանց բովանդակային վերանայման ուղղությամբ:

3. *Պեդական քննությունների անցկացման ձևի վերանայում.*

- 2016-2017 ուս. տարում բակալավրիատի պետական քննությունը «Քաղաքացիական դատավարություն» առարկայից նախատեսվում է անցկացնել գրավոր ձևով,
- ներկայումս մշակվում են պետական քննության ընթացքում առաջադրվելիք խնդիրների տարբերակները, ինչպես նաև գնահատման չափանիշները:

4. *Հեռակա բաժնում ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացում.*

- դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով ապահովելու նպատակով թարմացվել և կայքում զետեղվել են առարկայական ծրագրերը, որոշ ուսումնական և ուսումնասօժանդակ նյութեր:

5. *Արդահամալսարանական գործունեություն.*

- ամբիոնի անդամները դասախոսություններով մասնակցում են ՀՀ արդարադատության ակադեմիայում ընթացող վերապատրաստման դասընթացներին (Ս. Մեղրյան, Վ. Հովհաննիսյան, Տ. Մարկոսյան), ինչպես նաև դասավանդում են ՀՀ Փաստաբանական դպրոցում (Ս. Մեղրյան, Տ. Մարկոսյան),
- ամբիոնի անդամներ Ս. Մեղրյանը և Վ. Հովհաննիսյանը՝ որպես Եվրոպայի Խորհրդի փորձագիտական խմբի անդամներ, ներգրավված են ՀՀ քաղաքացիական դատավարության նոր խմբագրությամբ օրենսգրքի նախագծի պատրաստման աշխատանքներին (նախագիծը ներառվել է ՀՀ ԱԺ օրակարգ),
- ամբիոնի անդամներ Ս. Մեղրյանը և Տ. Մարկոսյանը՝ որպես Եվրոպայի Խորհրդի փորձագիտական խմբի անդամներ, ներգրավված են ՀՀ դատական օրենսգրքի հայեցակարգի պատրաստման աշխատանքներին (նախագիծը ներկայացվել է ՀՀ Արդարադատության նախարարությանը),
- ամբիոնի պրոֆ. Ա. Իսկոյանը հանդիսանում է Օրիուսի կոնվենցիայի Հասարակության մասնակցության հարցերով նպատակային խմբի նախագահի տեղեկալ, Էկոլոգիական իրավունքի ոլորտի գիտնականների միության (Gutta) անդամ, ՀՀ բնապահպանության նախարարության կոլեգիայի անդամ, Կայուն զարգացման

հարցերով խորհրդի անդամ, ինչպես նաև ՌԴ Էկոլոգիական ակադեմիայի թղթակից անդամ,

- ամբիոնի անդամ Հ. Հախվերդյանը Օրիուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի անդամ է.
- Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնը «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ «Հզորությունների ստեղծում ՀԿ-ների համար՝ շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացին արդյունավետ մասնակցության համար՝ համապատասխան գործիքների մշակման և իրազեկվածության մակարդակի բարձրացման միջոցով» ծրագրի շրջանակներում մշակել է «Շրջակա միջավայրին վերաբերող իրավական ակտերի մշակման գործընթացին հասարակայնության մասնակցության կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: Կենտրոնում 2016 թվականի հունիսի 28-ին տեղի է ունեցել վերը նշված Որոշման նախագծի քննարկում:

Ամբիոնի վարիչ

Ս. ՄԵՂՐՅԱՆ

11.10.2016 թ.